ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«26» «03» 2018թ.**
ժ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԳԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/
ՎալերՀոդաբաշլյան/ԲԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղդեյան/ՄՀՄ/

<u>ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ</u>
Յուրա Մուշեղյան

1. Միաժամանակյա բանակցությունների վարում 28-րդ չափաբաժնով՝ չհրկիզվող պահարան, փաստաթղթերի և այլ արժեքների պահպանման համար <<Օլանդա>> ՍՊԸ-ի, 43-րդ չափաբաժնով՝ կախիչներ <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ի և <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ի հետ:
2. Ներկայացրած գնային առաջարկների և բանակցությունների արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ <<Օլանդա>> ՍՊԸ-ի և <<ՍԵՆԴԱ>> ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
4. <<Օլանդա>> ՍՊԸ-ից և <<ՍԵՆԴԱ>> ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Միաժամանակյա բանակցությունների վարում 28-րդ չափաբաժնի մասով՝ <<Օլանդա>> ՍՊԸ-ի, 43-րդ չափաբաժնի մասով՝ <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ի և <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ի հետ

Քանի որ գնման ընթացակարգի 28-րդ և 43-րդ չափաբաժնի մասով մասնակիցների գնային առաջարկները գերազանցում էին տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ 2018 թվականին մարտի 26-ին, ժամը 11-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքի, N 205 աշխատասենյակում կազմակերպվել էր բանակցություններ, որին ներկա էին՝

- 28-րդ չափաբաժնով՝ <<Օլանդա>> ՍՊԸ-ն արդյունքում նվազագույն գին առաջարկեց՝ 200000(երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 40000(քառասուն հազար) ՀՀ դրամ, ընդամենը՝ 240000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

- 43-րդ չափաբաժնով՝ <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ն արդյունքում նվազագույն գին առաջարկեց՝ 197500 (մեկ հարյուր ինսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 39500(երեսունինն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ընդամենը՝ 237000(երկու հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ: <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ն չէր ներկայացել բանակցություններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Ներկայացրած գնային առաջարկների և բանակցությունների արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում

Քանի որ գնահատող հանձնաժողովի 2018թվականի մարտի 22-ի թիվ 4 արձանագրությամբ 1-ին, 5-րդ, 8-րդ, 19-րդ, 20-րդ, 38-րդ, 42-րդ և 43-րդ չափաբաժիններով <<Սեմանգ>> ՍՊԸ-ի հայտը ճանաչվել էր անբավարար և մերժվել էր, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով բանակցությունների արդյունքները և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներով՝ վերոնշյալ չափաբաժիններով՝ մասնակիցների գնային առաջարկի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակցներ ճանաչել.

1-ին, 9-րդ և 28-րդ չափաբաժիններով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Օլանդա>> ՍՊԸ-ին:

5-րդ,19-րդ և 38-րդ չափաբաժիններով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ին:

8-րդ չափաբաժնով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Սենդա>> ՍՊԸ-ին:

20-րդ չափաբաժնով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՄՈՐՄ>> ՍՊԸ-ին:

42-րդ չափաբաժնով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՌԱՋ ՇԻՆ>> ՍՊԸ -ին:

43-րդ չափաբաժնով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում <<Օլանդա>> ՍՊԸ-ի և <<ՍԵՆԴԱ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ <<Օլանդա>> ՍՊԸ-ից և <<ՍԵՆԴԱ>> ՍՊԸ-ից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերով և հայտով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան